Մաքսապետն Իպրահիմ Ագա, որ նստէր 'ի Ցոպպէ, գրեաց յԵրուսաղէմ առ միաբանս Հայոց եւ Ցունաց, ընդունել երկաքանչիւրոց 50 քսակ փոլիցա, և փութով տալ փոխանակագիր։ Ցոյնք անյապաղ կատարեցին զհրաման նորին, և ետուն գիր 50 քսակի։ Իսկ Հայք ոչ ընկալան զայն, և աղերսագրով դարձուցին յետս, առաջի եդեալ զանբաւականութիւն իւրեանց · զի ազգայինք Կոստանդինուպօլսոյ ճանձրացեալ յերեսաց փոխանակագրոց, պատուիրեալ էին չընդունել այլ եւս։ Սակայն մաքսապետն առանց բանալոյ զգիրն դարձոյց յետս · Հայք վերստին առաքեցին զայն առ նա 'ի ձեռն բարեկամի միոյ։ Եւ նորա առեալ զգիրն լի բարկութեամբ և ցասմամբ մեծաւ ընկէց արտաքս, և նախատական բանիւք անարգեաց զազգն ողջոյն, և եդ 'ի բանտի զտեսուչն վանաց Ցոպպէի զՂազար վարդապետ, սպառնացեալ նմա տալ ըմպել զհարուածս դաւազանաց 1000, և նորա երկուցեալ անկաւ անդ սրտաբեկ։ Իսկ ոմանք յայլազգեաց իբր բարեկամ գրեցին գիր յորդորական, և եդին 'ի նմա զգիրն զայն եւ առաքեցին յԵրուսաղէմ՝ հարկադրելով զմիաբանսն ընդունիլ և տալ զփոխանակագիրն · զի եթէ ոչ կամիք ասեն, ունկն մատուցանել խրատուց մերոց · անպարտ եմք ապադայ չարեացն, որք ունին հասանիլ 'ի գլուխս ձեր։ Գրեաց առանձին և Ղազար վարդապետ զամենայն անցս, զոր անցոյց ընդ նա մաքսապետն։ Այլ միաբանք Հայոց գրեցին գիր և ընդ նմին առաքեցին զայնոսիկ գրեանս 'ի Կոստանդինուպօլիս 'ի ձեռն տուրհանդակի, զի թերեւս կարասցեն գտանել անտի օգնութիւն (1798)։